

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության և Հարավաֆրիկյան Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունների մասին

Հարավաֆրիկյան Հանրապետությունը գտնվում է Հարավային Աֆրիկայում: Տարածքը 1.221.037 քառակուսի կիլոմետր է, բնակչությունը՝ 54 միլիոն: Մայրաքաղաքը Պրետորիան է, խոշորագույն քաղաքը՝ Յոհաննեսբուրգը:

Հարավաֆրիկյան Հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն է. նախագահ՝ Միրիլ Ռամաֆոսա, ԱԺ նախագահ՝ Բալեկա Մտեբե:

Հայաստանի Հանրապետության և Հարավային Աֆրիկայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. հունիսի 23-ին:

ՀՀ-ի ՀԱՀ դեսպանության նստավայրն է Կիևը: Ներկայիս արտակարգ և լիազոր դեսպան՝ Քրիստիան Ալբերտուս Բասսոն:

Երկրի ՀՆԱ-ն 2018թ.-ի տվյալներով կազմել է 326,541 միլիարդ ԱՄՆ դոլար, մեկ շնչի հաշվով 6,292 ԱՄՆ դոլար:

2015թ.-ի սեպտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը իր հավանությունն է տվել «Հայաստանի Հանրապետության և Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը:

Հարավաֆրիկյան Հանրապետության հայ համայնքը ձևավորվել է 20-րդ դարի սկզբին: 1970թ. Ստեղծվել է ՀԱՀ հայկական ընկերությունը, որը մոտ 300 հոգանոց հայկական համայնքին ապահովում է կիրակնօրյա դպրոցով:

Ապրանքաշրջանառության ծավալները (հազ. ԱՄՆ դոլար)

	Արտահանում	Ներմուծում
2012թ.	115,8	4465,6
2013թ.	16,1	45387,8
2014թ.	10,8	7584,0
2015թ.	61,8	8100,6
2016թ.	40,2	14501,9

Ներմուծվող հիմնական ապրանքատեսակներ

ՀԱՀ-ից Հայաստան ներմուծվող ապրանքների մեջ գերակշիռ տեղ են զբաղեցնում մրգերը (2016թ. տվյալներով 629տ) և ծխախոտի հումքը (2016թ. տվյալներով 1300տ):

Արտահանվող հիմնական ապրանքատեսակներ

ՀՀ-ից Հրավաֆրիկյան Հանրապետություն արտահանվող ապրանքների մեջ ըստ 2016թ տվյալների հիմնական մաս են կազմում քիմիական ծծմբաօրգանական նյութերն ու դեղամիջոցները:

Համագործակցություն պալատների միջև

2007թ. մայիսի 10-ին ՀՀ դարձել է ՀԱՀ առևտրաարդյունաբերական պալատին կից գործող Արևելյան Եվրոպայի երկրների Բիզնես Համաժողովի անդամ:

Հայ-հարավաֆրիկյան համագործակցության ծավալման համար հեռանկարային ոլորտներ են համարվում ադամանդագործությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը (գինեգործություն, սննդի վերամշակում):